


*Փոխմարզպետ Մովսես Քարտաշյանը ներկա է գտնվել հակառակորդի գնդակից զոհված Արարատ Խանոյանի հիշատակը հավերժացնող հուշաքարի բացմանը*



Դեկտեմբերի 9-ին Սարդարապատ համայնքում բացվեց 2014թ. հուլիսի 31-ին ադրբեջանական դիվերսիոն խմբի ներթափանցման ժամանակ թշնամու գնդակից զոհված, ժամկետային զինծառայող Արարատ Խանոյանի հիշատակը հավերժացնող հուշաքարը:

Հուշաքարի բացմանը ներկա էին ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Մովսես Քարտաշյանը, Սարդարապատ համայնքի ղեկավարը, դպրոցի տնօրենը, Արարատի ծնողները, հարազատներն ու ծառայակից ընկերները:

Նախաձեռնությունը «Արմավիրի մարզի երիտասարդական կենտրոն» ՀԿ-ինն էր, որը ՀՀ նախագահի գործընկեր կազմակերպության՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հայտարարած դրամաշնորհային մրցույթի շրջանակներում իրականացնում է «Կյանք՝ հանուն կյանքի» ծրագիրը:

Նույն ծրագրի շրջանակներում Սարգիս Մովսիսյանի և Գոռ Գրիգորյանի ծննդավայրերում նույնպես կտեղադրվեն նրանց հիշատակը հավերժացնող հուշաքարեր:

Հավելենք, որ հուշաքարի բացման արարողությունից հետո համայնքի դպրոցում սարդարապատցիները դիտեցին Արարատ Խանոյանի մասին պատմող ֆիլմ: